07.10.2024

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Արդեն 10 տարի մեր երկրի տոնացույցում Հոկտեմբերի 7-ը նշվում է որպես Գրադարանավարի օր, որը ևս մեկ պատեհ առիթ է՝ կարևորելու և արժևորելու գրադարանավարի աշխատանքը:

Հարգելի գրադարանավարներ

Ընդունեք ջերմագին բարեմաղթանքներս ձեր մասնագիտական տոնի՝ Գրադարանավարի օրվա առթիվ:

Բոլոր ժամանակներում ընդգծված է եղել մեր վերաբերմունքը գրքի ու գրականության հանդեպ:

Ժամանակի ընթացքում փոխվել են շատ պահանջներ, գրադարանավարի գործի նկատմամբ էլ մեր մոտեցումները կրել են էական փոփոխություններ, սակայն գիրք ընթերցելու մշակույթը չի կորցրել իր գրավչությունն ու արժեքը:

Կրթամշակութային գործընթացներում անփոխարինելի է եղել և մնում գրադարանավրի դերը, որն իր աշխատանքով գրքի զինանոցը պահում է ամուր և պահանջված:

Այսօրվա գրադարաններն էլ ոչ միայն գրքի տուն ու պահոց են, այլ առաջին հերթին կրթական կենտրոններ, մշակութային ինքնատիպ միջավայր ձևավորող հարթակ:

Սևան համայնքում գործող գրադարանները կատարել և կատարում են իրենց առաքելությունը, և հենց գրադարանավարների նվիրումի շնորհիվ է գրադարանը պահպանել իր լավագույն ավանդույթները:

Սևան համայնքում իրենց գործի գիտակ, փորձառու մասնագետների պակաս չկա, որոնք իրենց աշխատանքի շնորհիվ գրադարանավարի մասնագիտությունը դարձրել են հարգանքի ու ակնածանքի արժանի:

Սիրելի գրադարանավարներ

Դուք գրադարանային գործի լավագույն ավանդույթների պահպանողն ու փոխարինողն եք, ձեզանից շատերն իրենց կյանքի զգալի մասը նվիրել են գրադարանային գործին՝ կատարելով իրենց պատվաբեր առաքելությունը, փոխանցելով ընթերցողներին ամենակարևորը՝ սերը գրքի նկատմամբ:

Այսօր Սևան համայնքի գրադարանավարների գործունեությունը միավորվել է «Սևանի Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի շրջանակներում, որտեղ բանիմաց մասնագետների ու նվիրյալների պակաս չկա:

Մեր բարդ ժամանակներում, երբ պարտադրված ենք դիմակայելու մի շարք մարտահրավերների, կարծում եմ, որ գիրքն ու գրականությունը պետք օգնեն և ուղղորդեն, որպեսզի մենք չկորցնենք հայրենապահպանման ու աշխարհաճանաչման իմացությունը:

Գրադարանավարի օրն էլ պետք է դառնա գրքի տոնի ու ապագային միտված գրադարանի ստեղծման լավագույն հնարավորության:

Հարգելի գրադարանավարներ, գրադարանային գործի նվիրյալներ

Ընդունեք իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու շնորհավորանք-բարեմաղթանքները ձեր մասնագիտական տոնի առթիվ, ցանկանում եմ ձեզ բարեկեցություն և առողջություն, լավատեսություն և երկարակեցություն, խաղաղ երկնքի տակ ապրելու և անվտանգ, ապահով ու արժանապատիվ պայմաններում աշխատելու հնարավորություն: